Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ
Armenian Territorial Development Fund

N 16/01/1990-24 «08» հուլիսի 2024թ.

«Բախմաչգազբուդսերվիս» ՍՊ ընկերության
տնօրեն պարոն Արտակ Սաղաթելյանին

«Բախմաչգազբուդսերվիս» ՍՊ ընկերության
հայաստանյան մասնաճյուղի տնօրեն պարոն Բ. Սաղաթելյանին

Հարգելի պարոնայք,

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ նաև Հիմնադրամ) «Բախմաչգազբուդսերվիս» ՍՊ ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն), ի դեմս «Բախմաչգազբուդսերվիս» ՍՊ ընկերության հայաստանյան մասնաճյուղի միջև 2024 թվականի հունիսի 06-ին կնքվել է «Կապալային աշխատանքների կատարման պետական գնման» թիվ ՀՏԶՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/50-1 պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի 1.3-րդ կետով նախատեսված է, որ աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրով՝ շինարարական աշխատանքների կատարման ժամկետը սահմանելով 640 օր:

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ առանց ֆինանսական միջոցներ նախատեսելու, իսկ ֆինանսական միջոցները նախատեսվել են ՀՀ կառավարության 2024 թվականի փետրվարի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական

Հայաստանի Հանրապետություն, 0037, Երևան, Կ. Ուլնեցու 31
"/Fax: (37410) 240 159 " (37410) 247 123
K. Ulnetsu st. 31, Yerevan, 0037, Republic of Armenia
"/Fax: (37410) 240 159 " (37410) 247 123

բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, փոփոխություն և լրացումներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2323-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի փետրվարի 1-ի N 172-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 256-Ն որոշմամբ:

Նկատի ունենալով ֆինանսական միջոցներ նախատեսված լինելու հանգամանքը և հիմք ընդունելով Պայմանագրի 8.13-րդ կետը, Հիմնադրամի կողմից 07.06.2024 թվականին Ընկերությանն է ուղարկվել ծանուցում, որին կից ներկայացվել է թիվ 1 համաձայնագիրը՝ միաժամանակ սահմանելով ծանուցումը ստանալուց հետո ստորագրված համաձայնագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումների բանկային երաշխիքները ներկայացնելու 15 օրյա ժամկետ:

Հաշվի առնելով այն, որ ծանուցմամբ սահմանված ժամկետում Ձեր կողմից չեն ներկայացվել ստորագրված համաձայնագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումների բանկային երաշխիքները և ղեկավարվելով Պայմանագրի 8.13-րդ կետի դրույթներով, որի համաձայն՝ Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում, հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է, Հիմնադրամի և Ընկերության միջև 2022թ. հունիսի 06-ին կնքված «Կապալային աշխատանքների կատարման պետական գնման» թիվ ՀՏՀՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/50-1 պայմանագիրը համարվում է միակողմանիորեն լուծված:

Սույնով տեղեկացվում եք նաև, որ Ձեր կողմից ներկայացված Տուժանքի մասին համաձայնագրերի 1.4-րդ կետերի պահանջներից ելնելով, Պայմանագիրը չկատարելու համար Հիմնադրամը պահանջ է ներկայացնելու «Ակբա բանկ» ԲԲ ընկերություն՝ պայմանագրի ապահովման՝ 126,000,000 (հարյուր քսանվեց միլիոն) և որակավորման ապահովման՝ 378,000,000 (երեք հարյուր յոթանասունութ միլիոն)

ՀՀ դրամ գումարները, ինչպես նաև հայտի ապահովման գումարը ստանալու համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ 7/2/2024

X **Ս. ԲԱՂԻՆՅԱՆ**

ՍԱՐԳԻՍ ԲԱՂԻՆՅԱՆ

Signed by: BAGHINYAN SARGIS 1404640118

Կապարող՝ Նազելի Տեր-Պետրոսյան
Հեռախոս՝ (060) 50 15 60 (502)